

ԻՐԱՔԵԱՆ ՀԱՐՅՈՎ

«ԱՆՈՒԱՐ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՍՐԱԳՐԱՊԵՏ ՌԱՖԻԵ ԽՈՒՐԻ ԴԱՍԱԽՕՍԵՑ ՀԱՅՎԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԵԶ



Հայկապեան համալսարանին մեջ երեկ դասախօսեց «Անուար» օրաթերթի խմբագրապետ Ռաֆիք Խուրի՝ իրաքի դեմ ամերիկեյրի-տանական պատերազմին եւ անոր ուսմավարական հետեւանքներուն մասին:

Դասախօսութեան ներկայգտնուեցան Հայկապեան համալսարանի անուարեան, ինչպէս նաեւ համալսարանի դասախօսներ եւ բազմաթիւ ակադեմականներ:

Խուրի անդրադարձաւ իրաքի դեմ պատերազմին, նշելով, որ Միացեալ Նահանգներ միշտ ալ ուժի դիմած են իրենց քաղաքականութիւնը պարտադրելու համար:

Խուրի շեշտեց, որ իրաքի դեմ պատերազմով Մ. Նահանգներ կ'ուզեն ամբողջ աշխարհի համակարգը փոփոխութեան ենթարկել եւ անէլ-ցուց, որ այս հոլովոյթէն զխաւոր օգտուողը Իսրայէլն է:

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵԶ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ
Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ՓԱՄՐ 5:00:
ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահազգ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առեւն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Հովանաւորութեամբ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՓԱՌԱՏՕՆ 2003-ին
Կազմակերպութեամբ «ԱԶԳ. ՆՈՒՊԱՐԵԱՆ - ԽՐԻՍՏԵԱՆ» ԿԱՐԺԱՐԱՆԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Գ. ԻՓԵԿԵԱՆ» Թատերախումբը
Կը մասնակցի «ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՓԱՌԱՏՕՆ 2003»-ին
Կը ներկայացուի Մ. ԻՃԽԱՆԻ «ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔԱՆ»
Բեմադրութիւն՝ ՉՈՏՐԱՊ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ
Այսօր՝ Ծաբաթ, 5 Ապրիլ 2003ի երեկոյեան ժամը 7:00ին, «Պէյթ Էլֆէնն»-ի քառերարտասիւն մէջ, Սինա - Թրիփոլի:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Արուսեակ Մուղալեան
Տէր եւ տիկին Գարիօ Մուղալեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արթուր Մուղալեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վիգէն Մուղալեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Փոյ Մուղալեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Ռուպէր Պէրպէրեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Թորոս Մուղալեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Արթին Պօղոս Մուղալեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Կարապետ Մուղալեան եւ զաւակունք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, Տօր, մեծ Տօր, հօրեղբոր եւ հարազատին:

ՕԳՍԷՆ ՍՈՒՂԱԼԵԱՆԻ (Ծնեալ՝ 1926ին)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 3 Ապրիլ 2003, կէսօրէ ետք ժամը 4:00ին, իր բնակարանին մէջ:
Ծնողարկաւորութեան արարողութիւնը կատարեցաւ Ուրբաթ, 4 Ապրիլ, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատուն:
•Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
•Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ամանոս քաղ, Ծաբաթ 5, Կիրակի 6 եւ Երկուշաբթի 7 Ապրիլին:

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՍԿՍԱԻ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ



Երեկ, լեւոմիջօրէի ժամը 4:00ին, Ազգային առաջնորդարանի դահլիճին մէջ, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեանի նախագահութեամբ Գաւառական ժողովը սկսաւ իր աշխատանքներուն:
Գեղամ եպ. Խաչերեանի կատարած բացման աղօթքէն ետք, տեղի ունեցաւ առժամեայ դիւանի ընտրութիւնը. ներկայութեան ստուգումէն եւ ժողովին օրինականութեան հաստատումէն ետք ընտրուեցաւ մնայուն դիւան, որմէ ետք ժողովը անցաւ օրակարգերու կէտերու քննարկման: Օրակարգ.
Յանձնախումբերու (քուէախոյզ, բանաձեւ) ընտրութիւն, Գաւառական ժողովի նախորդ նիստի ատենագրութեան ընթերցում եւ վաւերացում, Կրօնական ժողովի, ապա Քաղաքական ժողովի ու հաշուեքննիչ յանձնախումբի երկուստեքի կատարած զննարկումներու տեղեկագիրի ընթերցում, պիւտձէի ներկայացում, վարձարաններու կանոնադրութեան քննարկում, բանաձեւի յանձնախումբի պեկուցում, պանապանք եւ առաջարկներ, Կրօնական ժողովի, Քաղաքական ժողովի եւ հաշուեքննիչ յանձնախումբի ընտրութիւն եւ ժողովի փակում:
Ժողովը երեկ կարգ մը օրակարգեր սպանեց, իսկ այսօր պիտի շարունակէ իր աշխատանքները:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԲԱՐՁՐ. ՎԱՐԺԱՐԱՆ
Սկսած են 2003-2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Կրթական յաջորդ տարեշրջանին համար նորեկ աշակերտներու արձանագրութիւնները սկսած են Եայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն վարժարանին մէջ: Արձանագրութեան օրերը՝ Երկուշաբթի Ուրբաթ. առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ ժամը 1:00, վարժարանի քարտուղարութեան մօտ: Հասցէ. Պուրճ Համուտ, Արաբս փողոց: Հեռ. 01-260504:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ԲՆԵՄՆԱՐԿՈՒՄԻՆ «ԱԶԳԱԿ»-ԻՆ
Վճարելով «Ազգակ»-ի տարեկան բաժանորդագինը, մեր ընթերցողները օրաթերթին հետ կը ստանան նաեւ «Երկիր» շաբաթաթերթը, ամսական յաւելումներ՝ «Պոստիկ-Սպոսիկ»-ը, «Անահիտ»-ը, «Նաւասարդ»-ը ու «Ազգակ» ամսաթերթը:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԷՔ «ԱԶԳԱԿ»-ԻՆ:
Հեռահայեցէ՛ք՝ 01/260115, 01/258526, 01/241274
Fax : 01/258529
E-mail: aztag@inco.com.lb
Website: www.aztagdaily.com

ԱԶԳԱԿ ՕՐԱԹԵՐԹ
ԵՐԿԻՐ
ԱԶԳԱԿ ԱՆՈՒԱՐ
ՊՁՏԻԿ-ԱՁՏԻԿ
ՆԱԽԱԳԱՅԻՆ

«ԱԳԱՎԵԱՆ - Հ. Մ. Բ. Մ.» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ
ԲԱՅՈՒՄ - ՅՈՒՅԱԳՐՈՒԹԻՒՆ ABBAՒ KUNG FU ՄԱՐՏԱՐՈՒԵՍԻ ՄԱՐԶՈՒՄՆԵՐՈՒՆ
Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 5 Ապրիլ 2003ի երեկոյեան ժամը 6:00ին
Հովանաւորութեամբ Մեծ Վարպետ ԿԱՐՕ ԲԵՊՈՒՊԵԱՆԻ
ՑԱՆԱԿԱԳՆՈՒԹԵԱՄԸ MASTER CHEN JAO YOUNGԻ
• Մարզումները կը սկսին՝ Ծաբաթ, 12 Ապրիլ 2003ին:
• Արձանագրութիւններ՝ Համալիրի տնօրէնութեան մօտ, հեռ. 04-722902/03:
ՀՐԱԷՐ ՄԱՐԶԱՄԵՐ ՀԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

Ներքին գործոց նախարարութեան հաստատած նոր օրէնքին հիման վրայ, այսօրուէ սկսեալ իրիստ հսկողութիւն պիտի ըլլայ ինքնաշարժներու ապահովագրութեան գծով:
Նշեալ օրէնքը ի գործ է նաեւ գրասալընթեան ինքնաշարժներուն: Օրէնքին համաձայն, այն ինքնաշարժը, որ ապահովագրուած չէ, չի կրնար նաեւ ինքնաշարժի արձանագրութեան (քրսմիլ) եւ մեքանիքի դիմել:
Կարելի է ապահովագրուել Լիբանանի մէջ ապահովագրութեան ծառայութիւն մատուցող 52 հաստատութիւններուն մօտ:

ԿԱՐԶԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՌԻՆԵՑԱԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երեկ հանդիպում մը ունեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի հետ: Քննարկուեցան նոյն օրը նախագահ գործի միջոցով Հաշուտի եւ վարչապետի միջեւ կայացած հանդիպումին արդիւնքները, ինչպէս նաեւ Լիբանանի եւ շրջանային իրադարձութիւնները:

ՊԵՆՉԻՆԻ ՄԱԿԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ՆՈՒԱԶՈՒՄ ԿՐԵՅԻՆ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտունի որոշումով պենզինի եւ մագնէթի սակերը արձանագրեցին 300 Լ. ոսկիի նուագում, իսկ ֆիոլ օյլը՝ 13 տողարի:
Վառելանիւթի նոր սակացոյցն է՝
Առանց կապարի՝ 98 օքթան թիթեղ մը պենզինը՝ 21,600 Լ. ո., առանց կապարի՝ 95 օքթան պենզինը՝ 20,800 Լ. ո., առանց կապարի՝ 92 օքթան պենզինը՝ 20,400 Լ. ո., առանց կապարի՝ 90 օքթան պենզինը՝ 20,100 Լ. ո., քարիւղը՝ 9,800 Լ. ո., մագնէթը՝ 10,400 Լ. ո., իսկ ֆիոլ օյլը՝ 234 տողար:

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ
• Ամանոսի շրջան, 2 ցնջասենեակ, հիւրասենեակ, ձաշասենեակ, 2 բաղնիք: Դիմել՝ հեռ. 01-250483 եւ 03-308639:
ԿՈՒՂՈՒԻ
• Հաստատութիւն մը, Տորայի շրջան, իր հազուստի ցուցադրարահին համար կարիքը ունի վաճառող օրհորդի մը, դիմել՝ հեռ. 01-260975 եւ 01-268301:

ԿԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ
• Նահըր, երկաթ կամուրջին մօտ, 3 ցնջասենեակ, հիւրասենեակ, ձաշասենեակ եւ յարակից մասեր, 2րդ յարկ: Դիմել՝ հեռ. 03 - 410718:
ԿՈՒՂՈՒԻ
• Զեսուաի խնձորի ընտիր բացախ արտադրող Զեժիճեան հաստատութիւնը Լիբանանի շուկային համար կը փնտռէ ներկայացուցիչներու ընկերութիւն մը. դիմել՝ հեռ. 02/93/524255 քիւի (Զեսուա):

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԱՅ ՀՐԱԷՐ
Մեծ Պահոց շրջանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան Երիտասարդացի պաշտամունքներուն պիտի պատգամեն Մեծի Տանն Կիլիկիոյ միաբան հայրերը:
• ԿԻՐԱԿԻ, 6 ԱՊՐԻԼ 2003
«Գալստեան Կիրակի» ժամը 5:30-6:30
ՀՈԳԸ. Տ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԶԻՅԹՃԵԱՆ

ՊԱՏԱՆԻ ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ
Երեկոյեան Յատուկ Դասընթացքներ ՄԵՍՐՈՊԵԱՆ
Արուեստից Վարժարանին մէջ
* Ոսկերչական ձևաորում
* Մոմի կաղապարաշինութիւն
* Աղամանդաշարութիւն
* Անգլերէն լեզու
* Համակարգչային գիտութիւն-computer
Գործակցաբար Լիբանանի Վարպետ Ոսկերիչներու եւ Գոհարագործներու Մեմտիքային
01/260504
Մեարդպեան. Միշտ մէկ քայլ առջեւ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԲԵՒԵՌԱՑՈՒՄՆԵՐ ԶԵՆ ՍՊԱՍՈՒՐ

Հայաստանի Ազգային ժողովի ընտրութիւններու թուականին մտնելու հետ սկսած են աւելի եւս յստականալ Հայաստանի քաղաքական բեմի վերադասարարութիւնը: Այս հարցին շուրջ հայրենի «Հայոց Աշխարհ» թերթը Ը. Յ. Դ. Բիրոյի անդամ ընկ. Վահան Յովհաննիսեանի հետ ունեցաւ հարցազրոյց մը, որմէ կու տանք հատուածներ:

ՎՐԵՆ ԸՆԿ. ԿԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Եւ վերջապէս, աշխարհագրական սկզբունքը պահպանուած է այնքանով, որ ցուցակին մէջ են Հայաստանի բոլոր մարզերու եւ Երեւանի բոլոր շրջաններու ներկայացուցիչները անխտիր:

Հ.- Կը նախատեսուի, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւնը եւ «Օրինաց երկիր»ը առանց դժուարութեան յաղթահարեն հինգ առ հարիւրի արգելքը եւ խմբակցութիւններ ունենան յառաջիկայ Ազգային ժողովին մէջ: Իշխանութեան եւ ընդդիմութեան ուժերուն եւս ընդունակ կը նկատուի այդ արգելքը անցնելու:

Պ.- Նախ չեմ ուզեր նախատեսութիւններ կատարել, որովհետեւ ընտրութիւնը կը կատարէ ժողովուրդը: Սակայն միեւնոյն ժամանակ որեւէ ուժի հինգ առ հարիւրը յաղթահարելու ունակութիւնը կամ ունէ՞նք անհատի մեծամասնական ընտրակարգով ընտրուելու կարողութիւնը տակաւին չի նշանակեր, թէ խորհրդարանին մէջ անոր կարիքը կայ: Պիտի գտնուի շատեր, որոնք այս կամ այն ընտրական տարածքին մէջ պիտի կարենան «անցնել», որովհետեւ զորաւ ունին եւ պաշտպանուած են իրենց կապերուն շնորհիւ: Բայց այդ մէկը չի նշանակեր, թէ խորհրդարանը կը զգայ անոնց անհրաժեշտութիւնը: Նոյնը կը վերաբերի նաեւ որչա՞ր ցուցակներու:

Սկզբունքորէն իշխանութեան կողմնակիցներու ճամբայէն պիտի ուզէի խորհրդարանին մէջ տեսնել Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը: Անոր զուգահեռ, անշուշտ, ընդդիմութեան ճամբային մէջ ալ կան ուժեր, որոնք խորհրդարանին մէջ ներկայութիւնը առողջարար պիտի ըլլայ մեր հասարակութեան համար եւ օգտակար խորհրդարանի օրէնսդրական աշխատանքը կազմակերպելու գործին մէջ:

Հ.- Նկատի ունիք «Ազգային Միաբանութիւն»ը, թէ Հայաստանի ժողովրդական Կուսակցութիւնը:

Պ.- Նկատի ունիմ «Ազգային Միաբանութիւն» Կուսակցութիւնը:

Հ.- Սակայն Հայաստանի ժողովրդական Կուսակցութիւնը ալ ակնյայտօրէն պիտի յաղթահարէ հինգ առ հարիւրի արգելքը:

Պ.- Այստեղ ես այնքան ալ համամիտ չեմ: Եթէ միայն Հայաստանի ժողովրդական Կուսակցութիւնը յաղթահարելու ըլլար հինգ առ հարիւրը, ես անձամբ պիտի ողջունէի այդ փաստը: Հայաստանի ժողովրդական Կուսակցութեան, անոր առաջնորդին եւ անոնց գաղափարներուն նկատմամբ մենք բնական վերաբերմունք ունինք:

Բայց անոնց հետ ներկայիս նոյն դաշինքին մէջ կան «չարտակներ», որոնք Հայաստանի ժողովրդական Կուսակցութեան շարունակ կը մղեն ոչ ճիշդ ուղղութեամբ: Այսպիսով, «Արդարութիւն» դաշինքի անուան տակ խորհրդարան կու գայ ո՛չ թէ Հայաստանի ժողովրդական Կուսակցութիւնը, այլ՝ այդ միաւորումը: Անոր համար ալ ես որոշ վերապահութիւններ ունիմ:

Հ.- Ձեր կարծիքով, ի՞նչ գաղափարական ուղղութիւն պիտի ունենայ յառաջիկայ խորհրդարանը, ձախ, կեղծամբ էտ, թէ աչ ազատական:

Պ.- Դժբախտաբար Հայաստանը տակաւին այն երկիրը չէ, ուր կարելի ըլլար խօսիլ քաղաքական կեանքի դասական բաժանումին մասին: Այսօր մենք յաճախ ակնատես կ'ըլլանք, երբ ծայրայեղ աջ կուսակցութիւններու ներկայացուցիչներ շունդալից ընկերավարական յայտարարութիւններով հանդէս կու գան:

Միեւնոյն ժամանակ ձախակողմեան կուսակցութիւններ, որոնք շարքին՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, մեկնելով պետութեան այսօրուան իրավիճակէն, երբեմն կը քուէարկեն ազատական որոշումներու եւ օրինադիմներու օգտին, գիտակցելով, որ երկրին բարեկեցութեան սահմանը հետ միայն պիտի բերեղանան քաղաքական բեւեռները:

Ուստի կարիք չկայ յառաջիկայ Ազգային ժողովէն սպասել դասական քաղաքական բեւեռացումներ: Անոր համար մենք տակաւին ճամբայ ունինք անցնելիք: Պէտք է աւելցնել նաեւ, որ յառաջիկայ Ազգային ժողովին մէջ ալ ներկայ պիտի ըլլան բազմաթիւ մարդիկ, որոնք կոճակներ պիտի սեղմեն ո՛չ թէ այն պատճառով, որ այդ կամ այն օրինագիծը ձախ կամ աջ ուղղութիւն ունի, այլ որովհետեւ իրենց այդպէս ըստած է:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

(Արեւմտահայերէնի վերածուած)

Founded in 1955

Haigazian University

is currently accepting applications

For Year 2003 - 2004

to the

- ★ Faculty of Arts and Sciences
- ★ Faculty of Business Administration & Economics

For further information contact:

Haigazian University, Mexique St. Kantari

Tel./Fax: 01-349230/1, 01-353010/1/2

E-mail: admissions@haigazian.edu.lb

www.haigazian.edu.lb

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՌԻԽՏԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ



ԱՐՅՈՒՆ-ՔՈՎ ՍՐԲՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԱՋԸ

Քառած, կաթողիկոսի հետ գերեզմանապատը, գրադարանը, պատանդ վերցուած, ծախուած ու ապա գնուած, անյայտացած ու վերագտնուած, իր հովուած ժողովուրդին հետ աքսորուած, ու ի վերջոյ, դժբախտ օր մը, Անթիլիսիոսի մայրավանքէն հաւատք կը ցուցաբերեն մեր ժողովուրդի զաւակները: Մեր հաւատոյ Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջը այդ նուիրական սքանչելիքներէն է, որ մեր քրիստոնէական պատմութեան վաղ ժամանակներէն սկսեալ իր հովանին տարածած է մեր ազգին ու եկեղեցւոյ վրայ:

Դարձեալ Անթիլիսիոսի կաթողիկոսարանի Ուխտի Օրն է...:

Քրիստոնէաներ կանուխ դարերէն սուրբերու մասունքներուն նրկատմամբ յարգանքի երեւոյթ ցուցաբերեցին, անոնց մահէն ետք, անոնց ֆիզիքական անմիջական ներկայութեան նշանը հանդիսացող մասնիկներուն օրհնութիւնը իրենց հետ ունենալու հաստատ համոզումով: Այս յարգանքը՝ տուեալ սուրբին աջ ձեռքի մասունքներուն նկատմամբ, իր արմատները ունի արեւելեան աշխարհի մշակութիւն մէջ, ուր տարեցին, ուր յատկապէս հոգեւորականին աջը համբուրելը յարգանքի խոր արտայայտութիւն մըն է տակաւին: Ի վերջոյ, անվերապահ հաւատքը մասունքներու նկատմամբ, կ'երաշխարհէր կատարուած գանազան տեսակի բժշկութիւնները, որոնք սուրբերուն աջ ձեռքին հպումով տեղի կ'ունենային աստուածային հրաշքով: Աստուածային ուժն էր, որ կը ներգործէր անոնց աջին միջոցով: Ուստի սուրբերու մահէն ետք, անոնց աջին վերցուած մասունքի մը գործութիւնը, անոնց հանդէպ արտայայտուած հաւատքով՝ աւելի՛ ազդու կը դառնար՝ հոգեւոր շինութեան առիթ հանդիսանալով հաւատացեալներուն:

Քանի՛ք քանի հաւատացեալներ ցարդ արցունքոտ աչքերով համբուրած են Ս. Լուսաւորչի Աջը, բժշկութիւն խնդրելով անկէ իրենց հոգիի ու մարմնի ցաւերուն: Քանի՛ք քանի բարի մաղթանքներ իրենց սրտին՝ մօտեցած են անոր ու յուզումէն տակաւնը աչքերով համբուրած անոր մասնատուիք: Վերջապէս, քանի՛ք քանի անգամներ հայոց հայրապետները արտայայտուած են Ս. Աջը ու անով օրհնած՝ մեր ժողովուրդի հաւատարմութիւնը, անոնց տխուր թէ ուրախ օրերուն:

Պատմութեան էջերը թերթատած ժամանակ կարելի չէ չլուզուիլ կարողալով Ս. Աջին ողիւսական նրկութիւնը, 1957 թուականին, երբ հայութեան ծովածաւալ բազմութիւն մը յորդեցաւ Պէյրութի միջազգային օդակայանին մէջ՝ դիմաւորելու համար ամբողջ տարի մը բռնազրաւեալ մնացած, մեր ազգային մեծագոյն

արքայութիւնը՝ Ս. Աջը: Այնուհետեւ Աջը դարձեալ ամէն տարի դուրս կու գայ մայրավանքի վեհաբանէն, կաթողիկոսարանի Ուխտի Օրուան առիթով, վեհապառ Հայրապետին ձեռամբ օրհնուած մեր ժողովուրդին բոլոր զաւակները անխտիր, որոնք հաւատքով ու երկիւղածութեամբ կը մօտենան անոր: Սրբալոյս Միւռոնի քառասունատեսակ բոյներու հիւսիսէն Սուրբ կաթնային մէջ Ս. Աջով իրարու միախառնուած պահուած, Գրիգոր Լուսաւորչի ինք կ'օրհնէ զայն անգամ մը եւս, ինչպէս օրհնած էր առաջին անգամ, երբ Ս. միւռոն պատրաստելով օծած էր քանդուած բազիլիկներուն տեղ կառուցուած խորանները:

Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջին նկատմամբ այս պաշտամունքային յարգանքը ընտել կարելի չէ համեմատել վերջին տարիներուն վատիկանի կողմէ Հայ եկեղեցւոյ նուիրապետական բարձրագոյն երկու Աթոռներուն նուիրուած Լուսաւորչի նշխար պարունակող մասնատուիքներուն հանդէպ տածուած նոր զգացումին հետ:

Աջին նկատմամբ արմատաւորուած հաւատքը ոչ այնքան դարբերու երկրպագով պատմութեան մեջ կ'արտայայտուի, երբ օտար՝ քրիստոնէայ թէ մահմետական տէրութիւններու յարձակող բանակները թիրախ չունին զայն: Միայն ձորապետներու կեղեքումներէն վերջնականօրէն ազատած է անիկա: Չկան այլեւս զայն դրաւի դնելու համար օրուան հոգեւոր վերին իշխանութեան տակ դնող խաներն ու շահերը: Անդառնալի



կերպով պատմութեան մեծ խաւարին մէջ կորսուած են հարստահարողի զաւակներու հոգիի խոնարհութեան մէջ: Որովհետեւ նոյն այս սրբազան մասունքը ոչ միայն մեզի հետ քայլեց մեր պատմութեան ճամբաներէն, այլ պաշտպանեց մեզ մեր թշնամիներուն դէմ, ո՛չ միայն յայտնաբերուած դեղ եղաւ մեր հաւաքական կեանքին մէջ, այլեւ՝ բժշկեց մեզ մեր խտրութիւնն ու հիւսիսաբերական հզօր ուժ ըլլալով՝ կատարեց մեր սրբոտի փափաքները ու նուիրականացաւ իր պատեանին վրայ ցօղած մեր հաւատքի արցունքներով...:

Ս. Լուսաւորչի աջը պատանդ վերցնելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը իր հոգեւոր իշխանութեան հեղինակազրկելու ձախող փորձը վերջինը պիտի ըլլար անոր տառապանքի հանգրուաններուն՝ հեաքցետէ անոր վրայէն շեղելով շարամիտ ու զարուհիները եւ բարիով փոխարինելով զայն: Չարի փոխարէն բարի ու շաղկուտները արտայայտուեցին պիտի գտնէր իր վերջին տունդարձին առիթով, 1957 թուականին, երբ հայութեան ծովածաւալ բազմութիւն մը յորդեցաւ Պէյրութի միջազգային օդակայանին մէջ՝ դիմաւորելու համար ամբողջ տարի մը բռնազրաւեալ մնացած, մեր ազգային մեծագոյն

ԳՐԻԳՈՐ ՎՐԳ. ԶԻՅՈՒՄԵԱՆ Ծար.՝ էջ 8

«ՌԻԽՏԻ ՕՐ»

ԱՆԹԻԼԻԱՍԻ ԵՒ Ս. ԱՋԵՐՈՒ ՄԵԾԱՀԱՆԴԵՍ ԹՎՓՈՐ

Ս. Գրիգոր Լուսաւորչի Սուտն ի Վիրապի տօնին՝ «Անթիլիսիոսի Ուխտի Օր»ուան առիթով, Անթիլիսիոս Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան հետեւեալ արարողութիւնները:

● ՇԱՐԱՍԺ. 5 ԱՊՐԻԼ

- Առուօտեան ժամը 9:30ին Ս. Պատարագ
- Երեկոյան ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն՝ ի պատրաստութիւն յաջորդ օրուան ուխտարարութեան:

● ԿԵՐԱԿԵ. 6 ԱՊՐԻԼ

- Սուրբ եւ անմահ պատարագ, որուն պիտի հետեւի Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջով գլխաւորուած սրբազան մասունքներու բաժնորդ՝ Անթիլիսիոսի Մայրավանքի շրջափակին մէջ, մասնակցութեամբ միաբան հայրերուն եւ քահանայից դասուն:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝ **ՕՃԱԿԱՆ Ս. ԱՐԸ. ՉՈՒՆՅԵԱՆ**

Առաջնորդ Շիւսիսային Անթիլիսիոսի Արեւելեան թեմին

Արարողութեանց եւ բաժնորդի պիտի հանդիսակալուի **Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**

Ժամերգութիւն **ժամը 8:30ին**

Պատարագ **ժամը 10:00ին**

Քարոզ **ժամը 11:00ին**

Ս. Աջերու եւ այլ մասունքներու բաժնորդ **ժամը 11:30ին**

Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարուի «ՇՆՈՐԱԼԻ» երգչախումբին կողմէ:

Կը հրակիրենք մեր ժողովուրդի բոլոր զաւակները՝ մասնակից դառնալու Ս. Գրիգոր Լուսաւորչի Ուխտի Օրուան:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Գրական Էջ

ԿԵԱՆՔԷՆ ՈՒ ՄԱՀԷՆ ԱՆԳԻՆ...



Գիրքը գրողին համար գոյություն ունի այն պահին, երբ արդեն մտայնացրած է: Գրելը ծննդաբերություն է:

ՎԱՀԷ ՔԱՉԱ

Շուրջ երեք ամիս առաջ, 14 Յունուարի գիշերը, 75 տարեկան հասակին իր աչքերը վերջնականապես փակեց ֆրանսահայ աշխարհահռչակ գրող Վահե Քաչա (Խաչատուրեան), որ իր ստորագրությամբ կրող 25 վեպերով եւ շարժապատկերի 15 ժապավեններով սենարիոներով մեծ վարկ ու համբավ շահեցավ վերջին հինգ տասնամյակներում՝ դառնալով ֆրանսական ժամանակակից գրականության, բայց ի մասնավորի եօթներորդ արունստի փլուզումը դեմքերեկ մեկը:

1 Ապրիլ 1928ին Գամակոսի մէջ ծնած Վահե Խաչատուրեան անուն երիտասարդին գրական կեանքը կը սկսի Պէյրուքեմ, երբ Յիսուսեան Հայրերու Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանէն շրջանաւարտ՝ 1945ին կը մեկնի Փարիզ, ուր երեք տարի կը հետեւի շարժական թեմադրիչի դասընթացներուն՝ աշակերտելով նշանաւոր բեմագրիչ Անտրե Քաչաթի: Աշակերտական գրասեղաններու վրայ իր գրական ճանապարհը կատարած երիտասարդ ուսանողը, այդ շրջանին, Փարիզէն կ'աշխատակցի Պէյրուքի «Լը Սուար»ին: Սակայն եօթներորդ արունստի կախարական ուղորտներով հմայուած Վահե Խաչատուրեան իր առաջին յաջողութեան հրճուանքը կը նաշակէ գրականութեան կալուածին մէջ, երբ հուշակաւոր N. R. F. հրատարակչատունէն 1953ին լոյս կը տեսնէ իր «Կիրակնօրեայ ծիսակներ» վեպը, որուն կարճ ժամանակ մը ետք կը յաջողէն «Ակն ընդ ակն» (1954) եւ «Կարբը» (1957) անուն վեպերը. որոնք կը թարգմանուին հայերէն:

Ինչպէս կ'ըսեն՝ Վահե Քաչա անուն երիտասարդ արձակագիրը ֆրանսական գրականութեան ճերմակ ցեղանուրը կը գործէ անոր լայն դարպասէն, երբ իր առաջին իսկ հատորով գրաքննարկներուն ուշադրութիւնը գրաւած այս օտարականին «Ակն ընդ ակն»ը 1955ին կ'արժանանայ «Ռիվարոյի» յարգելի քննարկ մը: Բայց արդէն իսկ կարճ ժամանակ մը անց, «Ակն ընդ ակն»ի հիմամբ, Անտրե Քաչաթ կը նկարահանէ հետաքրքրական ժապավեն մը, որ աւելի լայն նահաջում է հուշակ 'կապահովեց անոր երիտասարդ հեղինակին:

Աւելի ևս. ֆրանսերէնով լոյս տեսնելէ անմիջապէս ետք գերմաներէնի, իտալերէնի եւ քսոներէնի թարգմանուած «Կիրակնօրեայ ծիսակներ»ու եւ «Ակն ընդ ակն»ի հեղինակին ֆրանսական գրականութեան մուտքը կը գլուցարկի այն օրերուն, երբ ֆրանսական հրատարակչատուները ու ընթերցողները ծարաւ էին նոր անուններու: Եւ յար եւ նման ողջ Ֆրանսայի ուշադրութիւնը գրաւած «Ողջոյն տիրութիւն»ի երիտասարդ հեղինակուհի Ֆրանսուա Սակակնի՝ Վահե Քաչա նաեւ իր վրայ կը կեդրոնացնէ լուսարձակները, կ'արժանանա՝ բարձր գնահատանքի եւ գրասէր հասարակութեան կը հրաժմցնէ գրական նոր սեռ մը՝ «վեպ - սենարիո»ն, որ տակաւ առ տակաւ կը վերածուի «վեպ - սենարիո»ի:

Նոր վեպեր իրարու կը յաջորդեն: «Սեղմըւած բունցներ», «Արարչի ութերորդ օրը», «Գաւազան», «Կապիկներու նաւը», «Ուզածիդ չափ», «Հրեայի մահը», «Ամէն ինչ կամ ոչինչ», «Գիշատիչներու խնամքը», «Թողեք մեռնի», «Փողոցի մէջ ինկած է մարդ մը» եւ մինչեւ իր նորագոյն գործերէն՝ «Դաշոյն մը այս պարտէզին մէջ» «ասը հայոց»ը, որ 1894 - 1915 ժամանակահատուածին հայ ժողովուրդին ապրած տառապանքն ու սարսփալը դրացական կալուած շունչով վեր առնող վեպ մըն է, Վահե Քաչա միշտ կ'առաջնորդուի միեւնոյն մեկնակետէն, - հալածեալ, սարսփահար եւ խոշտանգուած մարդուն ներքին խաւարը սիրոյ ու հատաքի, յոյսի ու պայքարի լոյսով պառնակերպելու իրաւ գրագետի ազնիւ հանգանակէն:

Մահուան ու կեանքի միջեւ փոթորիկով հրդեհներէն իր հերոսները դուրս բերելով Վահե Քաչա գրողը կ'օժտէ անպատկան եւ անձանցով կարեւոր յարաբարելու այնպիսի ներուժ օրուրեմամբ մը, որ միշտ ալ մահը դիտեց իբրեւ կեանքի իւրաքանչիւր պահի մէջ գտնուող վիճակ, մարդկային գոյութիւնը մեկնաբանող - հաստատագրող անաւարտ կեցողութիւն մը, որուն ամէնէն պարզապէս մեկ արտայայտութիւնն է «Դաշոյն մը այս պարտէզին մէջ» հրաշայի վեպը:

Բայց այդ մասին՝ այլ առիթով:
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՎԱՀԷ ՔԱՉԱ

որ մտահոգ է, թէ քանի գարուն է ապրել, մինչդեռ մարդը յուշերի շտեմարան է:

Բայց մի՞թէ մարդը իսկապէս դատապարտուած է շարունակ անյայտի եւ անպատեւի ծովալի մէջ լինել: Վ. Քաչան այդ հարցին մասամբ պատասխանում է Տիմակովի («Գիշատիչների խնամքը») վերաբերյալ: Նկատենք որ ինքը՝ Վ. Քաչան, մարդուն չափազանց սուղ հնարարութիւն է թողնում իրերի եւ դէպքերի ընթացքը ղեկավարելու, գոնէ վերլուծելու համար: «Գաւազան» եւ «Գիշատիչների խնամքը» ո'չ միայն այդ ծովալին եւ անարագորումը, այլեւ՝ մարդու աստիճանական եւ հետեւողական ստորացումը, ոչնչացումը, զգաճացումը անյայտի առջեւ: Վ. Քաչան ասես ո'չ մի իլիուզիա չի տաժում մարդկային ցածր կրքերի շտկման, վերացման հարցում: Այն ժամանակ եւ ճանաչում ինքը թեզ, երբ հանդիպում եւ չնախատեսուածի», - ասում է Գալին «Ամէն ինչ կամ ոչինչ» վիպակում: Եթէ «չնախատեսուածը» Քերտեանին, իրեն Դուրեանին, Ուիլիամ Գետարմուսին, Գալինո ղէմ առ ղէմ է հանում իրենց վեհաճանաչութեան, վճարակալութեան, նուիրածութեան եւ գործնական մարդասիրութեան հետ, ապա Միստոնը կամ Վիլկերը, Վիկտորը կամ Վեստը, Թէյլորը կամ Քարտը ընթերցողի առջեւ բացում են իրենց ողջ նողկալի էությունը: Վ. Քաչան անողոր ու դաժան է մարդկային ստորութեան հանդէպ եւ մեղմ է ու զիջող, երբ «չնախատեսուածը» մարդու մէջ բացայայտում է միայն ազնիւր եւ գեղեցիկը:

«Մենք վարժեցում օժտ ենք: Մեր շղթան կոչում է կարգ ու կանոն», - ասում է Տիմակովը եւ վեպի վերջում եզրակացնում. «Ինչ - որ բան դեռ խախտու է»: «Ինչ - որ բան» խանգարում է մարդուն միայն վերջ ազնիւ եւ բարձր լինելու, ըստ Վ. Քաչայի՝ դա նրա վախն է անյայտից: Յիշենք Տիմակովի անողորը (Screenite) վեպի վերջին էջերում. «Սկի՞զը, վե՞րը: Ի՞նչ կարեւոր է»: Ինչո՞վ է փրկում Տիմակովը միւսների՝ Անադար ստորացումներից, ինչո՞վ է վեր մնում ցածր կրքերից: Նա անտարբեր է մահուան հանդէպ, նա կատարելաւ աւտոնոմիկ անձնատրուիւն է, մինչդեռ միւս հերոսները սարսփի առջեւ մերկանում են եւ այդ նողկալի հոգեկան ստրկատիրոջ լեռնային ստիպում են ողջ գիշերը միասին անկացնել:

Այսպիսին է Վահե Քաչայի հուամանիզմը. նա սիրում է մարդու մէջ կորույթի ոգին, ազնուութիւնը եւ անպատկան նուիրածութիւնը մարդկանց հանդէպ. մի վստահ ու հանդարտ հայեացք դէպի կեանքի ամէն մի կտրուկ շրջադարձը:

(1976 - հատում) Ա. Լ. ՔԱՅԱՆԻ ԹՈՓՉԵԱՆ

ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ԽՆՃՈՅՔԸ



Արձանների պէս քարացած, միանգամայն չանդրադարձան նրա խօսքերին: Կառուցարարի հեռացող ոտնաձայնները լսեցին: Նրա արձակած հրամանները լսեցին: Գիշերուան մէջ անհետացող բեռնատարների հռնդոցը լսեցին:
Բրիժիտը վեր կացաւ, պատուհանից նայեց դուրս:
- Այլեւս մարդ չկայ, բոլորը գնացել են: Դու կտորը պատահաբարը դրեց եւ սասց:
- Կնոջս գնաց տամ:
Վիլկերը անձեռնդիւրով երես սրբեց, շապիկի կոճակները կոճակեց եւ ուղղեց փողկապը: Պիեռը վարանոտ թայլերով ուղղուեց դէպի լողասրահ: Ֆրանսուզը եւ Վիլկերը չէին շարժուած: Տիմակովը սիգարի մոխրը թափեց մոխրամանի մէջ:
Դու կտորը հեռախօսը միացրեց:
- Դո՛ւ ես... Գիտեմ, ուղչ է... առանձնապէս մի բան չէր, յետոյ կը պատմեմ...
Լուսփողը կախեց: Վիլկերը մի համար հաւաքեց:
- Ինչո՞վ կին, խեղճ կին, եթէ իմանաս, թէ մեզ ինչ պատահեց... պատկերացրու...
Նա երկար բացատրեց եւ դարձաւ Բրիժիտին:
- Կինս հարցնում է, թէ ապարանջանը քեզ դուր է եկե՞լ: Վաղը կը գայ քեզ տեսնելու...
Նա կախեց լուսփողը, ճակատի քրտինքը սրբեց:
- Ա՛յ քեզ երեկոյ, ա՛յ քեզ երեկոյ...
Արդէն մոռացել էր, թէ որտեղ է: Չեկը դեռ ձեռքին էր
- Չեղեկի երեկոյ էր, - ասաց Վիլկտորը:
- Կարելոյն այն է, որ մենք ողջ եւ առողջ ենք, - ասաց Վիլկերը: - Ճիշդ չե՞մ ասում, դու կտոր:
Դու կտորն աչքերը չռեց:
- Ճիշդ ես ասում, - ասաց նա:
Ֆրանսուզը մտախոհ էր: Վերջապէս ասաց:
- Ես միտք եմ անում, թէ Կառուարխն իրօք պատանդներ վերցնելու ցանկութիւն ունէր:
- Ի՞նչ ես ուզում ասել:
- Ոչինչ: Ես ինքս ինձ հարցնում եմ:
Վիլկերը մըթմըթաց:
- Ի հարկէ, ուզում էր... Այդ տեսակ վայրենիները...
Պիեռը ներս եկաւ: Նա դէմքը էր լուսացել:
- Ես գնում եմ տուն, - ասաց նա: - Ունեմ մէկը չի՞ ուզի ինձ ուղեկցել:
- Ոչ, - պատասխանեց Տիմակովը: - Ոչ ոք: Նրանք գարմացած եւ նեղուած իրար նայեցին: Տիմակովը աւելացրեց:
- Ոչ ոք, որովհետեւ արդէն պարետային ժամ է: Մենք ստիպուած ենք գիշերն այստեղ անցկացնել:
Վիլկերը վեր թռաւ:
- Ճիշդ է ասում: Պարետային ժամ է: Ես

Առաջին անգամ էր, որ նրա հետ «դու»ով էր խօսում:
- Ոչինչ, - պատասխանեց Տիմակովը:
Բրիժիտը գնաց խոհանոց մի շին գինի բերելու: Վիլկտորը հետեւեց նրան: Բրիժիտը նայեց ամուսնուն, յետոյ նրա զիրկը ընկաւ, չկարողանալով արցունքները գոսպել: Դա այնքան անսպասելի էր, որ Վիլկտորը ցնցուեց:
- Ինչո՞ւ ես լալիս: Պէտք չէ... Աչքերդ սրբիր:
Ուզում էր Բրիժիտին թողնել, բայց վերջինս աւելի ամուր կառչեց նրանից: Յետոյ թողեց:
- Դու ինձ սիրում ես:
- Այո, ես քեզ սիրում եմ, ես քեզ սիրում եմ...
- Ի՞նչ պիտի անենք մեր հիւրերի հետ:
- Ես նրանց կը տեղաւորեմ, - ասաց Բրիժիտը: - Տեղ ունենա՞ր... մնայ մտայն:
Նրանք վերադարձան հիւրերի մօտ: Վիլկերը բաժակը բարձրացրեց:
- Մենք դժուարին պահեր ապրեցինք, - ասաց նա: - Պէտք է մոռանալ... Պէտք է ամէն ինչ մոռանալ... Հասկանո՞ւմ է՞ք... պատերազմ է... պէտք է ետ-ետ գնա՞նք... ուրեմն այսպէս... մենք հէնց նոր եկանք... ամէն մէկը մի փոքրիկ նուէր է բերել... անկեղծօրէն... Բրիժիտի տարեկարծն է... մենք սեղանը ենք նստում եւ սկսում կարկանդակել... անկեղծօրէն...
Տիմակովն իր բաժակն առաւ եւ զնաց հիւրասենեակի կիսախաւարի մէջ: Նա բոլորին տեսնում էր: Մի կողմ խմեց: Ի՞նչ տարբերակ է այս բոլորը, - մտածեց նա: - Օրինակ Վիլկերը: Պատրաստուած մարդ է... Հանգիստ կեանք է վարել: Կարողացել է... գուցէ փրկուի: Մի բան որոշակի է իր ամբողջ կեանքում մըթիւն անգամ չի տորել... Եւ ան Վիլկերն ինչպիսին որ կայ... նա անցնում է իմ կողքով, եւ ես նրան հրում եմ: Վիլկերը, որ յիսուն տարի առանց ձայնը բարձրացնելու ապրել էր՝ փոխում է: Նա գունատուում է, գործում է, հրում է ինձ... գրեթէ ինձ սպանելու ցանկութիւն ունի: Հապտաօրինակ չէ՞... Ինչո՞ւ: Բնագոյն է... Բնագոյն... Բայց դպրոցում մեզ բնագոյն գոսպել չեն սովորեցնում: Վա՛հ, կեանքի օրէնքն է... մենք բոլորը գիշատիչներ ենք... փոքրիկ, սիրուն, լաւ վարժեցրած գիշատիչներ, եւ մենք շղթայի կարիք չունենք: Մեր շղթան կոչում է կարգուկանոն... մենք եմթարկուած ենք միջերին... Օձերի պէս տարիներ շարունակ մնում ենք անշարժ... Յետոյ, միանգամից, ցատկում ենք մեր գոհի վրայ... լաւ կամ վատ մարտում ենք եւ թաղուած մեր անշարժութեան մէջ ու մոռանում... Ինչ-որ բան դեռ խախտու է... Իսկապէս, ինչ-որ բան դեռ խախտու է... Իսկապէս, իսկապէս, ինչ-որ բան դեռ խախտու է...
ՎԱՀԷ ՔԱՉԱ
(Փարիզ, 1959 - հատում)

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՍԼԱՔ

«ՄՇՏԱԿՆՈՒՆՉ ԵՒ ՄՇՏԱՐԹՈՒՆ»

Եղեռնի յուշարձաններ, իրենց մարմարա- կերտ կամ մետաղեայ լուսբեան մէջ աղաղա- կող, յիշողութեան ծանրութեամբ ինքնամո- ռաց մարդկութեան խղիճին, մտքին, պատուան- դանին վրայ ճնշող:

Յիրուցան հայ ժողովուրդին նման, բայց հայ ժողովուրդը իրենց շուրջ հաւաքող: Սե- ւակեան բացատրութեամբ «մշտահունչ եւ մշտարթուն» հսկողներ, որպէսզի յիշողու- թիւնը տեղի չտայ մոռացումին եւ հայու ող- ջակիզման փաստը չմոխրանայ ձուլումի եւ համաշխարհայնացման փուռերուն մէջ:

Բայց նախ եւ առաջ իրական: Աւելի իրական քան տղտուկ ու հեւքը օր- ւան, մօր մը ժպիտը, փոքրիկներու խաղը. աւելի իրական քան մենք: Որովհետեւ մենք սո՛ւտ ենք եւ խաբէութիւն առանց անցեալին հետ մեզ միացող այդ քարակերտ, երկաթա- կերտ պորտակապիճ:

Եւ եղեռնի յուշարձանները, իրենց ճնշող իրականութեամբ, այսուհետեւ ներկայ պիտի ըլլան նաեւ անիրական, վրէժուրը աշխարհին մէջ՝ համացանցի վրայ, անգամ մը եւս յի- շեցնելով աշխարհին, որ հայը իր նահատակ- ներուն դատը պիտի հետապնդէ անիրական եւ իրական բոլոր ճակատներուն վրայ հաւասարապէս:

ԲԶԻՉԱՅԻՆ ՀԵՌԱՉԱՅԻՆ ԵՐԵՍՈՒՆԱՄԵԱԿ




Հինգշաբթի, 3 Ապրիլին, ընկալան հեռաձայնը դարձաւ 30 տարեկան: Արդարեւ, այդ օր, 1973ին, առաջին անգամ ըլլալով հանրութեան ծանօթ դարձաւ ընկալան հեռաձայն կողմէ «հրաշք»:

«Մարդիկ ապահար կը հետեւէին ցուցադրու- թեան», կը յիշէ Մարթին Քուփըր, որ Մանհատթենի մէջ կատարեց ընկալան հեռաձայնով առաջին հաղոր- դակցութիւնը: Քուփըր, «Մոթորոլա» ընկերութեան գիտաշխատող մը, իր ձեռքին մէջ ունէր այսօրուան չափանիշներով «սօդաձայն» անթիւ հեռաձայն մը՝ 15 սանթիմետր երկայնք եւ աւելի քան 1 քիլոգրամ ծան- րութիւն ունեցող: Սարքին միջոցով կարելի էր 20 վայրկեան զրուցել առանց բարձր վերալիցքաւորելու: Հակառակ իր «նախնական» կարելիութիւններուն, այս ընկալան հեռաձայնը օրուան երեւոյթը նկատ- ւեցաւ, որովհետ ըլլալով որ սկզբնական բարելաւում մը կը հանդիսանար համեմատաբար 1940ականներէն ի վեր ինքնաշարժներու վրայ տեղադրուող հեռա- ձայններուն:

Դժամեայ Քուփըր այսօր «խելացի անթեմներ»-ու արհեստագիտութեան բնագաւառին մէջ կ'աշխատի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱԿՈԹՈՂՆԵՐՈՒ ԱՐԽԻՒ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



Հայկական Ազգային Հիմնարկը (Արմինիւն Եւ- շընըր Ինսթիթիւթ - ԱԻԻ) համացանցի վրայ տե- ղադրած է Հայկական Ցե- ղասպանութեան նուիրու- ած աւելի քան 130 յու- շարձաններու մասին տե- ղեկութիւններ:

Հայկական Ցեղասպա- նութեան նուիրուած ամէնէն ընդարձակ ելեկտրոնային արխիւը, տ ե ղ ա դ ռ ու ա ծ w w w . a r m e n i a n - g e n o c i d e . o r g Հասցնով կայքին մէջ, առաւել եւս հարստացաւ այս արժէքաւոր ուսում- նասիրութեան ընդգրկումով: Կայքը այցելողներ «քլիք» ընելով «Genocide Memorials» խորագրին վրայ՝ մուտք կը գործեն ցաւի, յիշողութեան եւ վերապ- ընումի հոգեպարար աշխարհ մը, ուր ներկայացուած են, մանրամասն տեղե- կութիւններով եւ լուսանկարներով, 25 տարբեր երկիրներու մէջ գտնուող Հայկական Ցեղասպանութեան նուիր- ւած 135 յուշարձաններ:


Կայքին այս նորաստեղծ բաժինին մէջ նիւթերը դասակարգուած են ըստ երկրի: Տուեալներ փոխանցուած են Արժանթինի, Աւստրալիոյ, Աւստրիոյ, Պելճիքայի, Պրագիի, Հայաստանի, Պուլկարիոյ, Քանադայի, Չիլիի, Կիպ- րոսի, Եգիպտոսի, Ֆրանսայի, Գեր- մանիոյ, Յունաստանի, Իրանի, Իսրա- յէլի, Իտալիոյ, Լիբանանի, Հոլանտայ- ի, Չեխոսլովակիոյ, Նիւ Զեյլանդի, Սուիտ- Քիոյ, Ֆինլանդի, Միացեալ Նահանգներու եւ Ուրուկուէյի մէջ գտնուող յուշարձաննե- րու մասին: Կայքին մէջ «ԱԻԻ» կ'ողջունէ ցարդ փաստագրած 135 յուշար- ձաններուն վրայ յաւե- լումներ կատարելու եւ յաւելեալ տեղեկութիւն- ներ փոխանցելու օրեւէ նախաձեռնութիւն:

«Հայկական Ցեղաս- պանութեան Յուշար- ձաններու տաթապէս»ը պատրաստուած է յու- շարձաններու փաս- տագրման աւելի ընդար- ձակ ծրագրի մը ծիրէն ներս եւ անոր ֆինանսաւորումը կա- տարուած է «Ռեքֆորմ» Հիմնարկին կողմէ: Մրագիրը գործադրութեան ղրուած է նաեւ Միացեալ Նահանգնե- րու մէջ Ողջակիզումի Յիշատակին նուիրուած թանգարանին կողմէ: «Այս ծրագիրը իր տեսակին մէջ առաջինն է, որ համացանցը օգտագոր- ծողներուն առիթը կ'ընձեռնէ շուրջ 25 երկիրներու մէջ գտնուող յուշարձան- ներու մասին տեղեկութիւններ ստա- նալու», ըսաւ «ԱԻԻ»-ի նստօրէն տնօրէթ- Ռուբէն Ատալեան: «Տաթապէսի պատրաստութիւնը պահանջած է աւե- լի քան 3 տարի: Մրագիրը համադրող թալին Տէր Գրիգորեան կատարած է այս տեղեկութիւնները դերամատչելի

կերպով հանրութեան տրամադրու- թեան տակ դնելու աշխատանքը: Մրա- գիրը տակաւին ընթացքի մէջ եղող աշ- խատանք է, եւ անմիջապէս որ նորա- նոր տուեալներ հայթայթուին, տաթա- պէսը պիտի վերաթարմացուի», աւելի- ցուց Ատալեան:

Կայքի այս բաժինը այցելողներ պի- տի նկատեն, որ յուշարձաններուն մեծ մասը կը գտնուի Ֆրանսայի (34) եւ Միացեալ Նահանգներու (23) մէջ: Հա- յաստանի յատկացուած բաժինին մէջ ցանկագրուած են 27 յուշարձաններ:

Երկու խօսք հարկ է ըսել նաեւ տա- թապէսին մէջ տեղադրուած տեղեկու- թիւններու դիտական դասակարգու- մին մասին: Իրրեւ արդիւնք մանրազը- նին աշխատանքի՝ տուեալներ փոխան- ցուած են յուշարձաններու պատմակա- նին, աշխարհագրական դիրքին, կա- ուղեցուածքին հետ առնչուող մանրա- մասնութիւններու, քարտէսներու վրայ



անոնց անուանումին, անոնց վրայ եղած գրութիւններուն, կառուցման ընթացքին եւ հետագայ բարեփոխում- ներուն եւ նորագոյնութիւններուն, անոնց պատկանելիութեան, անոնց շուրջ տե- ղի ունեցող յուշատուներուն եւ ներկա- յացուած են նոյնիսկ հոն այցելող երե- լելի անձնաւորութիւններու անունները: Ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէ նաեւ յաւելեալ մանրամասնութիւննե- րու համար օգտագործելի ծանօթա- գրութիւն:

Կոթողական այս աշխատանքը, որ ինքնին համացանցի վրայ Հայկական Ցեղասպանութեան յուշարձան մը կը հանդիսանայ, արժանի է միայն ողջոյ- նի եւ դրուատիքի:

«ԱՆ ԺԱԳԻՐԱ» ԿԸ ԴԱՌՆԱՅ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ ԱՄԵՆԷՆ ԱԲԵԼԻ ՓՆՏՈՒՄԾ ԲԱՌԸ

Հակառակ այն իրողութեան, որ «Ան Ժագիրա» ար- բանակային լրատուութեան ցանցի պաշտօնական կայքը տեւաբար հէքըներու զոհ դարձած է, սակայն ան յաջողած է դառնալ համացանցի վրայ այս օրե- րուն ամէնէն աւելի փնտուռած կայքը:

Արդարեւ, «Այլընտրանք»-ի համաձայն, «Ան Ժագիրա» անցեալ շաբթուան ամէնէն աւելի փնտուռած բառը եղած է եւ «աւանդաբար» պարագլուխի դիրքերը իր մենատիրութիւնը դարձուցած «սեռ» բառէն ետագա- տիկ աւելի ժողովրդականութիւն վայելած է համա- ցանցին վրայ:

«Ան Ժագիրա»-ի ժողովրդականութեան այս հսկա- յական վերելքին պատճառը գլխաւորաբար իրաքեան պատկերասփռուէն քաղուած ամերիկացի սպան- նուած եւ գերեզմարուած զինուորները պատկերող վի- տէօ-ցուցադրութիւններու ներկայացումն է: Տրուած ըլլալով, որ ամերիկեան պատկերասփռումի



ցանցեր որոշած են դաշնակից զինուորներու դիակ- ները չցուցադրել, համացանցի վրայ նիւթերու հասո- ղութեան ապտուլութեան օգտուելով՝ անցնող օրե- րուն միլիտարներ «խուճուած» են «Ան Ժագիրա»-ի կայքը՝ տեսնելու համար «արգիլուած» պատկերնե- րը:

Նոյնպէս փնտուռելի «Կուլըլ» դրութեան համա- ձայն, անցնող շաբթուան ընթացքին «Ան Ժագիրա»-ի նկատմամբ հետաքրքրութիւնը հսկայական աճ ար- ձանագրած է:

Սակայն համացանցի միջոցով «Ան Ժագիրա»-ի կա- տարած սփռումները միայն դրական անդրադարձ չունեցան ընկերութեան կայքին վրայ: Չարացած հէ- քըները բազմաթիւ փորձեցին վար առնել կայքը եւ քա- նի մը առիթներով յաղողեցան: Այսպէս, օրինակ, «Ան Ժագիրա» անգլիատառ կայքը գրասուցուած հէքընե- րու կողմէ, որոնք կայքը այցելողներ ուղղեցին դէ- պի այլ էջ մը, ուր տեղադրուած է ամերիկեան դրօ- շակը:

«Ան Ժագիրա»-ի անգլիատառ կայքին խմբագիրը՝ Զօն Թաքըր ըսաւ, թէ յատուկ միջոցառումներու դիմուած է, որպէսզի հէքնիկի նման պարագաներ չկրկնուին:

Քաթարի կառավարութեան կողմէ ֆինանսաւոր- ւող «Ան Ժագիրա» ծանօթ է իրրեւ արաբական աշ- խարհի «ազատ» պատկերասփռումի գլխաւոր ցանցը: Անոր անգլիատառ կայքը հարկը 2 շաբթուան կեսնը ունի եւ հանրութեան տրամադրութեան տակ դրուե- ցաւ, որպէսզի Արեւմուտքը հետամուտ լայնաեւ դէպքերու արաբական դիտանկիւնին:

Ընդառաջելով ամերիկեան կառա- վարութեան առա- ջարկին՝ «Ան Ժա- գիրա» այլեւս ամե- րիկեան զինուոր- ներու դիակները չի ցուցադրեր նախ- քան անոնց ծնող- ներուն ամերիկե- ան բանակի պատ- կան մարմիններու կողմէ իրենց գաւազին մահուան բօթը փոխանցելը: Ամերիկացի ժողովուրդը մեծապէս հետաքրքրուած է պատերազմը տեղեկագրող ոչ ամերիկեան կայքե- րով: «Ան Ժագիրա» միակ կայքը չէ, որ իր շուրջ աղ- մուկ ստեղծած է: Ուսումնասիրութեան մը համա- ձայն, պատերազմի առաջին 6 օրերուն համացանցը օգտագործող ամերիկացիներուն 10 աւ հարիւրը օտար լրատուական գործակալութիւններու կայքե- րը այցելած է, իսկ 32 աւ հարիւրը տեղեկութիւն ստա- նալու համար դիմած է ամերիկեան լրատուական ցանցերու կայքերուն:

«Ան Ժագիրա», «Արապիա Տոթ Գոմ», «Ճորտըն Թայմզ», «Արապ Նիւզ» եւ լիբանանեան «Տէյլի Սթար» կը հանդիսանան արեւմտեան հանրութեան տեղեկատուութեան մարմալը յազանցող գլխաւոր կայքերը:

Այս բոլոր զարգացումները ցուցանին մը կը հան- դիսանան, որ արաբական մամուլը համացանցի մի- ջոցով անգլերէնով տեղեկութիւններ փոխանցելով սկսած է վերջ տալ արեւմտեան միակողմանի տեղե- կատուութեան բացարձակ մենատիրութեան:

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

PHOTO NERSES (Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ) ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 25ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 36 photo ֆիլմի նկարահանումը միայն 8,000 Լ. Ո. (Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍՍԱՅԵՔ ՆԱԵՒ Լուսանկարի նոր ֆիլմ մը + ալպոմ մը + նկարի INDEX մը Կը նկարներ փոքրերու լուսանկարներ ՉԱՍԿՈՒԱՆ յատուկ յարդարանքով PHOTO NERSES: Պուրճ Հանուտ, Զաղաքապե- տարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»-ի դիմաց: Հեռ. 01 - 261858 եւ 01 - 255992

ԼՈՒՐԵՐ՝ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԱԻԱՌԷՆ

■ «Էյ. Օ. Էլ.» ընկերու- թիւնը հանրութեան տրամադրութեան տակ դրուած վեբ-ըջի ծառա- յութիւն մը, որուն միջո- ցով կարելի պիտի ըլլայ համացանցին ստանալ ձայնային պատգամներ (voice message) եւ հեռա- ձայնի միջոցով ստանալ «Էյ. Օ. Էլ.» մայրաքաղաքի պատգամներու ծառա- յութիւններ մատուցող ընկերութիւններու հետ մրցակցութեան մտաւ:

■ «Ճանք մէյլ»-ի պատ- ճառած տաղտուկը մեղ- մացնելու համար «Մայք- ըրստֆիթ» ընկերութիւնը սահմանափակեց «հոթ- մէյլ»-ի միջոցով օրական առաքուող ե-նամակնե- րու թիւը: Իւրաքանչիւր բաժանորդը սակէ ետք օրական 100 ե-նամակէ աւելի չի կրնար ուղար- կել:

■ «Նոթմէյլ»-ի միջոցով «սփէմ» ե-նամակներ տարածողներ լուրջ խո- ջընդոտի առջեւ պիտի գտնուին, որովհետեւ անոնք օրական հազա- րաւոր ծանուցումներ կ'ուղարկեն ալ ու ձայն, եւ այդ ե-նամակները կը ծանրաբեռնեն ե-նամակի ծառայութիւններէ օգ- տուողներու ե-նամակա- տուփերը: «Մայքրոսոֆթ»-ի հաս- տատումով, «Նոթմէյլ»-ի 110 միլիոն բաժանորդնե- րին նուազ քան 1 առ հա- ղիւրը պիտի ազդուի այս միջոցառումնէ:

Մանկապատանեկան

ԳԱՐՈՒՆ

ԹԻԹԵՌՆԻԿՆԵՐԸ ԿՐ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ



Անոնց մեկ մասը կու գայ Երևանի Ափրիկե կամ Երևանի Երոպայեն, ուր ձմեռը անցուցած էր արեւուն տակ: Անոնք կը սպասեին պայծառ օրերուն՝ իրենց թեւերուն ծայրերը «ցուցադրելու» համար: Արագիւններուն նման, թիթեռնիկներն ալ կ'աւետեն գարնան ժամանակը:

